

Գ Ր Ք Ն Ր Ո Ւ Ն

Զօրքերու պէս կարգապահ ու ծերերու պէս խոհուն,

Գիրքեր նիհար, հաստափոք, շարուած են դէմս կողք-կողքի,

Իրենց սրտին ամփոփած իմաստութիւնն դարերուն,

Զիս կը կանչեն անընդհատ իրենց անհուն վայելքին:

Գիրքեր, գիրքեր բազմացեղ, դուք տարիներ շարունակ

Եղաք մտիքին իմ աւիշն, իմ սփոփանքն ու իմ զանձ,

Իմ ընկերներս լաւագոյն ու մերք ընկերք միակ,

Ու գոհացումը տուիք տենչանքներուն իմ անսանձ:

Պէտքս կոչէի ապերախտ՝ չեմ զարմանար ես այսօր,

Ջահելէ ետք ձեր լոյսով աղկաղկ իմ միտքն շարունակ

Նրբ կը լինէմ ձեզ մոռցած՝ քարիքները ձեր բոլոր,

Հրաւերին ձեր տափուկ՝ կը դարձրենք երբ կոնակ:

Այո, այլևս չեմ կրնար ընդառաջել հոգեկին

Հրաւերին ձեր, քանի դեռ կեանքին հետ կը կուրծի,

Լիանալու ձեր հացով երբ ժամանակը չունիմ,

Օ՛, ժամանակը այդ ժանտ — մեր մեծագոյն քշմամբն...:

Գ. ՃԱՐՏԱՐ

Երուսաղէմ, 1975